ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2014 թվականի N 118- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ԵՎ ԼՈՒՍԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ կետով և ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013թ. հոկտեմբերի 1-ի <<2014 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին>> թիվ 140-Ա որոշմամբ

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ և Լուսահովիտ համայնքներում համայնքի ղեկավարի հերթական ընտրությունները նշանակել 2014թ. դեկտեմբերի 14-ին:
2. Առաջարկել վերը նշված համայնքների ղեկավարներին.
   Օրենքով սահմանված կարգով ապահովել ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացը:
3. Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Մ. Մխիթարյանին.
   Ընտրության նախապատրաստման և անցկացման ժամանակահատվածում համագործակցել թիվ 40 ընտրատարածքային ընտրական և տեղամասային ընտրական հանձնաժողովների հետ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

18 սեպտեմբերի 2014թ.
ք. Իջևան